Գեղարքունիքի մարզ Վարդաձորի միջնակարգ դպրոց

Ուսումնական խմբակ՝

,Հայկական հարցի պատմություն

Տարեկան 68ժամ

Պատմության ուսուցիչ՝

ՖԵՐԴԻՆԱՆՏ ՊՈՂՈՍՅԱՆ

Ուսումնական խմբակ՝ Հայկական հարցի պատմություն

Ներկայացված է 11-րդ դասարանի աշակերտների համար

Տարեկան 68 ժամ (շաբաթական 2 ժամ)

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը ցեղասպանության առաջին զոհերից է, որ անիրված են նրա դարավոր իրավունքները, անհրաժեշտ է հայկական հարցի պատմությունը, պատմական դրվագները փուլ առ փուլ ուսումնասիրվի խմբակի ուսումնառության ընթացքում: Այն հնարավորություն կտա հայկական հարցի վերաբերյալ իրենց գիտելիքների շրջանակը ընդլայնել՝ ներկայացնելով իրենց կարողությունները և հմտությունները ապագա մասնագիտական կողմնորոշման հարցում:

Նպատակները

Ներկայացնել -հայկական հարցի վերաբերյալ պատմական դրվագների ավելի խոր ուսումնասիրություն *և վերլուծության հմտությունները:*

Զնավորել և զարգացնել սերունդները դաստիարակելու մարդու և ժողովուրդների բնական իրավունքը հարգելու մաքուր և անկեղծ հայրենասիրական գիտելիքներ:

Նպաստել –հայկական հարցի մասին փաստերի ուսումնասիրման և հիմնավորման գործընթացները հետազոտելու հմտություններ

Արժևորել-հայկական հարցի գոյությունը՝ որպես ազգային գաղափարախոսության անկապելի մաս, այն հաջորդ սերունդներին փոխանցելու անհրաժեշտություն:

Խնդիրները

Աշխատանք տանել պատմական փաստերով վեր հանել և հիմնավորել, որ հայկական հիմնահարցը վերաբերվում է համայն մարդկությանը և ոչ միայն մեր ժողովրդին:

Որոշադիր լինել թուրքական բոլոր ժամանակաշրջանի կառավարությունների դիրքորոշմանը՝ հայկական հարցում և ներկայիս իշխանության որդեգրած քաղաքականության , հայատյածության դրսևորմանը:

,Հայկական հարցի պատմությունե խմբակի ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով:

Աղյուսակները ներկայացված են հետևյալ բաժիններից

1.Թեմայի անվանումը, ժամաքանակը

2.Նպատակները

3.Խնդիրները

4. Վերջնարդյունքները

5.Բովանդակությունը

Ծրագրում առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների հետաքրքրություններին ու պահանջմունքների բավարարմանը:

Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքը հիմնական շեշտը դնելով սովորողի նախասիրությունների, գիտելիքների, կարողությունների ու հմտությունների զարգացման վրա:

Թեմա 1. ***Հայկական հարցի հիմքի կազմող հասկացությունները մարդու իրավունք, ազգ, հայրենիք, պետականություն (2ժամ)***

Նպատակ՝

Ընդլայնի իմացությունը՝ ժողովրդավարության կարևոր արժեքները՝ << Ազգ>> հասկացություն, ազգային գաղափար և սոցիալիզմ, ,Ազգային պետությունե հասկացությունների, ազգերի ինքնորոշման մասին

Խնդիրներ

Ծանոթացնել –ֆրանսիայի սոցիալիստ՝Ժան Ժորեսի հայանպաստ գործունեության մասին ,Կապույտ գիրքե, գերմանացի սոցիալ-դեմոկրատ Կարլ Կաուցկու Հայ Դատի պաշտպանի մասին:

Վերջնարդյունք՝

Կարողանա ներկայացնել- ,Ազգային պետականությունե ունենալու հայի իրավունքը, առաջնորդվելով ֆրանսիական հեղափոխության գաղափարով:

Բովանդակություն

1. Մարդու իրավունք, իշխանություն ժողովրդի հարաբերություն (1ժամ)

2. ,Ազգե և ,Հայրենիքե գաղափարները նրանց դերը պատմության մեջ (1ժամ)
3. ,Ազգային պետականությունը որպես իդիալ ու նպատակ (1ժամ)

Թեմա 2 Հայկական հարցի ծագումն ու էությունը, նրա լուծման ճանապարհին կատարված առաջին քայլերը: Արևելահայ և արևմտահայ հատվածների օսմանյան և ռուսական կայսրությունների գերիշխանության ներքո (5ժամ)

Նպատակ՝

Պատկերացում կազմի

,Ազգե, ,Հայրենիքե ,Ազգային պետականությունե, ,Թանզիմաթե ,Մարդու իրավունքե ,Էրմենի միլլեթիե հասկացություններին և առանձնահատկություններին:

Խնդիր՝

Ծանոթացնել մարդու իրավունքների պաշտպանության և ազգային խտրականության դատապարտման օրինաչափություններին:

Վերջնարդյունք՝

Ներկայացնի ռուսական տիրապետության անպատեհությունները հայերի նկատմամբ և Օսմանյան Թուրքիայի քաղաքականությունը հայերի նկատմամբ:
Բնութագրի և համեմատի՝ Ռուսաստանի և Թուրքիայի ներքին քաղաքականութ-
յունը հայրի նկատմամբ և եզրահանգումներ անի նրանց գործունեության վերաբերյալ:

Բովանդակություն

1. Հայկական հարցի էությունը, ծագումն ու առնչությունը արևելյան հարցի հետ (1ժամ)
2. Հայկական հարցի լուծման ճանապարհին կատարված առաջին քայլերը: (1ժամ)
3. Ղարաբաղի և Սյունիքի կարճատև անկախություն, պայքարը շարունակվում է (1ժամ)
4. Օսմանյան կայսրության քաղաքականության էությունը և հայկական հարցի (1ժամ)
5. Ռուսաստանը, Կովկաս մուտք գործելով, արևելահայ կյանքի տնօրինողն է դառնում: (1ժամ)

Թեմա 3. Հայկական հարցի միջազգայնացումը (15 ժամ)
Նպատակ՝
-Իմանա, թե արևմտահայաստանի որ շրջաններում էին իրականանում ռուս-թուրքական բախումները -Ծանոթանա Սան Ստեֆանոյի 16-րդ և Բեռլինի 61-րդ հոդվածներին, իմանա տարբերությունները: -Բացահայտի երիտթուրքերի հեղաշրջման և դաշնակցության գործունեության մասին:
Խնդիրներ
Ծանոթացնել Հայկական հարցի միջազգայնացման պատմական փուլերին (միջազգային դիվանագիտության, հայ մշակութային վերածննդի ազդակներում, քաղաքական կուսակցությունների գործունեության շրջանում):
Ցարական կառավարության քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ
Վերջնարդյունք
- Կարողանա հիմնավորի հայկական հարցի էությունը և մեծ տերությունների քաղաքականությունը
-Ներկայացնի մշակույթային վերածննդի ազդակները, մամուլը և զարթոնքի գրականության մասին կարևոր իրադարձությունները:
-Վերլուծի հայ ավանդական կուսակցությունների քաղաքական գործունեության նպատակները, ֆիդայական շարժումների և հայկական հարցի լուծման համիդյան քաղաքականությունը:
-Արժևորի հայ ժողովրդի պայքարը Անդրկովկասում, ցարական բռնապետության դեմ, գնահատի այդ դերը ինքնուրույնություն ձեռք բերելու համար
-Մեկնաբանի ցարական կառավարության ,**Բաժանիր, որ տիրեսե** քաղաքականությունը ու դրանց դիմագրավման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները:
Բովանդակություն
1. Հայկական հարցը միջազգային պայմանագրերում(1ժամ)
2. Հայկական հարցը և տերությունների քաղաքականությունը օսմանյան կայսրության նկատմամբ(1Ժամ)
3. Հայ մշակույթային վերածննդի ազդակները (1ժամ)

4.	Մամուլ և զարթոնք գրականություն (1ժամ)
5.	Բեռլինի վեհաժողովի արդյունքները որպես հայոց քաղաքական կյանքի խթան(1ժամ)
6.	Արևմտահայերը խմորվող շարժման գործուն մասնակից (1ժամ)
7.	Հնչակյան կուսակցություն (1ժամ)
8.	Արմենակյան կուսակցություն (1ժամ)
9.	Հայ հեղափոխական դաշնակցություն(1ժամ)
10.	Ֆիդայիները հայ ազատագրական պայքարի հիմնասյուն (1ժամ)
11.	Հալածանք ու կոտորած Արևմտյան Հայաստանում (1ժամ)
12.	Դժգոհության ալիքը կայսրության մեջ(1ժամ)
13.	Երիտթուրքական հեղաշրջման մթնոլորտում (1ժամ)
14.	Անդրկովկասում առաջին համահայկական շարժումը ցարական բռնապետության դեմ (1ժամ)
15.	Ցարական ,**բաժանիր, որ տիրեսե** քաղաքականությունը:

Թեմա 4 . Հայկական հարցը առաջին աշխարհամարտի տարիներին: Հայոց ցեղասպանությունը (12ժամ)

Նպատակ

Իմանա առաջին համաշխարհային պատերազմի դրդապատճառը պատերազմի հեռանկարը հայերի համար, հայ կամավորական ջոկատների, ռուսական քաղաքականության փոփոխման մասին

Ծանոթանա ,ցեղասպանությունե հասկացության, ոչ իսլամ ժողովուրդների մահավճռի, ցեղասպանության գործադրման, դաշնակիցների հակազդեցություններին:

Իմանա ինքնապաշտպանական մարտերի նշանակության և դերի, ցեղասապանության պատասխանատվության և դատաստանի մասին գործընթացներին:

Խնդիրներ՝

Ծանոթացնել պանթուրքիզմ և պանիսլամիզմ քաղաքականության էությանը, հայ կամավորական ջոկատների, հայոց ցեղասպանության ընթացքի, պետությունների և պետական արխիվները հայկական կոտորածների մասին, ինքնապաշտպանական մարտերի, ցեղասպանության ուրացման և պատմության խեղաթուրման 1917թ. Ռուսաստանըան հեղափոխության և հայկական հարցի մասին:

Վերջնարդյունքներ՝

-Կարողանա հիմնավոր բացատրություն տալ՝ երիտթուրքերի ծրագրերի և գործունեության ,Մեծ Թուրանե պետության ստեղծման հայ կամավորների հերոսական պայքարի , Սայքս-Պիկոյի համաձայնագրի , պատճառահետևանքային կապերը և կատարի եզրահանգումներ
-Վերլուծի հայոց ցեղասպանության ընթացքը, դաշնակիցների հակազդեցությունը, ինքնապաշտպանական մարտերի հերոսական դրվագները, կատարի փաստերի վերաբերյալ եզրահանգումներ:
-Բացատրի ցեղասպանության պատասխանատուների դատավարությունն ու դատաստանը, ցեղասպանության ուրացումը և պատմության խեղաթյուրումը, ցեղասպանության արձագանքը գրականության մեջ և անի համապատասխան հետևություն

-Բնութագրի 1971թ. ռուսաստանյան հեղափոխության և հայկական հարցի մասին, եզրահանգումներ անի հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Արևելյան և Արևմտյան Հայաստանի կարգավիճակի վերաբերյալ:

Բովանդակություն

1. Թուրքիան մասնակցում է պատերազմին իր ,Մեծ Երազինե հետամուտ (1ժամ)
2. Հայկական մարտական ուժը առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատում: (1ժամ)
3. ,Ցեղասպանությունե հասկացությունը, ցեղասպանությունը և Միավորված Ազգերի Կազմակերպությունը (1ժամ)
4. Հայոց ցեղասպանության ընթացքը: (1ժամ)
5. Պատմությունները և պետական արխիվները հայկական կոտորածների մասին(1ժամ)
6. Ինքնապաշտպանական կռիվներ: (1ժամ)
7. Ցեղասպանության պատասխանատուների դատավարությունն ու դատաստանը (1ժամ)
8. Ցեղասպանության ուրացում և պատմության խեղաթյուրում (1ժամ)
9. Ցեղասպանության արձագանքը հայ գրականության մեջ (1ժամ)շ
10. Ցեղասպանությունը շարունակվում է, ձուլում, մշակույթային ցեղասպանություն: (1ժամ)
11. Ռուսաստանյան հեղափոխությունների անդրադարձը Անդրկովկասում: (1ժամ)
12. Անդրկովկասի անկախ հանրապետությունը(1ժամ)

Թեմա 5. Հայկական հարցը պատմության նորագույն շրջանում (18ժամ)

Նպատակները՝

-իմանա Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման, դրանից բխող ներքին դժվարությունների, նպատակների, պետականության ամրակայման մասին:

-Բացատրի միացյալ և անկախ Հայաստանի հանրապետության տարածքային խնդիրները՝ Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի հետ:

-Բացահայտի ռուս-թուրքական համաձայնության և Հայաստանի խորհրդայնացման մասին Մոսկվայի որոշումները, Երևանի և Ալեքսանդրապոլի պայմանագրի դրույթները, փետրվարյան ապստամբության պատճառները և հետևանքները:

-Զարգացնել հայ ժողովրդի ազգային դրսևորումները, հայրենասիրության սովետական մարդու նկարագրի մշակույթային բնագավառում սոցիալիստական համակարգի առկայության, հետստալինյան ժամանակաշրջանում Հայաստանում արմատավորված ազգային գիտակցություն, հայ դատի խնդիրը խաղաղ պայքարի գործընթացներում հետազոտելու հմտությունները:

Խնդիր՝

Ծանոթանա նորագույն շրջանի հայկական հարցի պատմությանը, կատարել եզրահանգումներ, եզրկացություններ, վերլուծություններ , համադրումներ:

Վերջնարդյունք՝

-Ներկայացնի հայակական հարցը՝ պետական քաղաքականություն նպատակները, ծառացած խնդիրները

-նկարագրի հայակական հարցը՝ միջազգային հարաբերությունների ոլորտում ձեռքբերումները և բացթողումները

-Վերլուծի՝ 1919թ. մարտին Անտանտի երկրների հետ ստորոգրած Ռուսաստանի պայմանագիրը, Սևրի պայմանգիրը և Սան Ռեմոյի կոնֆերանսը և կատարել եզրահանգումներ

-Մեկնաբանի Հայաստանի խորհրդայնացումը հայկական հարցի պատմության մի նոր հանգրվան, ռուս-թուրքական համաձայնությունը, Հայաստանի խորհրդայնացման պայմանները, փետրվարյան ապստամբությունը և դրանից բխող պատճառահետևանքային կապերը:

-Առաջադրի պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, կանխատեսումներ անի դրանց արդյունքների և հետևանքների վերաբերյալ:

-Ներկայացնի 1920թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի և Երևանի պայմանագրերը Սահիկահանդեսի կամ պաստառի միջոցով, վերլուծելով պայմանագրերի պայմանները:

-Գնահատի հայ ժողովրդի ազգային զգացումներն ու հայրենասիրությունը ի նպաստ խորհրդային միության շահերի, հետստալինյան ժամանակաշրջանում Հայաստանում արմատավորվող ազգային գիտակցությունը, հայ դատի լուծման խաղաղ պայքարը միջազգային ատյաններում հայ ժողովրդի ձեռքբերումները:

Բովանդակություն՝

1. Հայկական հարցի էությունը նորարական Հայաստանում (1ժամ)
2. Ազատ, անկախ և միացյալ Հայաստան, հայկական հարցի Էության մարմնավորումը (1ժամ)
3. Հույսը միայն դաշնակիցների վրա չէր(1ժամ)
4. Դաշնակիցների պարտքը հայ ժողովրդին(1ժամ)
5. Ռուս –թուրքական համաձայնութունը: Հայաստանի խորհրդայնացումը (1ժամ)
6. Փետրվարյան ապստամբությունը(1ժամ)
7. Սոցիալիստական համակարգի ստեղծման ճանապարհին (1ժամ)
8. Կոմունիստական գաղափարախոսությունն իր դրոշմն է դնում հայ գրականություն վրա (1ժամ)
9. Խորհրդային միությունը դեպի երկրորդ աշխարհամարտի ավարտը առաջնորդող նոր ռազմավարություն(1Ժամ)
10. Դեպի հետստալինյան Հայաստան (1ժամ)
11. Խորհրդային միությունն ու հայ դատը (1ժամ)
12. Ազգային պահանջատիրության դրսևորումներ (1ժամ)
13. Արտագաղթը Հայաստանից և ,ներքին սփյուռքիե իրավիճակը վնասում են հայկական հարցին(1ժամ)
14. Սփյուռքը իր նոր իմաստով և նոր պայմաններով(1ժամ)
15. Սփյուռքը փորձում է հայ դատը հետապնդող քաղաքական ուժ դառնալ (1ժամ)
16. Եղեռնի հիսնամյակի ոգեկոչումներով սկիզբ առավ սփյուռքի քաղաքականացումը(1ժամ)
17. Ազգային Լիգայից մինչև ՄԱԿ: (1ժամ)
18. Մարդու իրավունքների պաշտպան այլ կազմակերպությունների ատյաններում (1ժամ)

Թեմա 6. Զինված պայքար անարդարության դեմ: Թուրքիայի դերը հայ դատի հետապնդման պայքարում(7ժամ)

Նպատակ

-Զարգացնել հմտություններ՝ բացահայտելու ,Հայաստանի ազատագրությանե, ,Հայ գաղտնի բանակե, հրահրված շարժման, ,հայկական ցեղասպանության արդարության մարտիկներե խմբի գործունեությունը:

-Թուրքիայի դերը Հայ Դատի հետապնդման պայքարում և հայրենիք-սփյուռք ազգային շարժման առանձնահատկությունները, բացահայտելու նպատակով:

Խնդիրներ

Ծանոթացնել անարդարության դեմ հայ ժողովրդի պայքարի, հայկական ահաբեկչական պարտքերի և Թուրքիայի դեր Հայ Դատի հետապնդման պայքարի պատմությանը:

Վերջնարդյունք

-Ներկայացնի Հայաստանի ազատագրության ,Հայ գաղտնի բանակիե հայոց ցողասպանության, ,Արդարության մարտիկներե խմբի գործունեության և ,Հայ յեղափոխական բանակիե գաղափարի և գործելակերպի վերաբերյալ իրադարձությունները և երևույթները:

-Մեկնաբանի ԱՄՆ-Ի դիրքորոշումը՝ հայկական ահաբեկչության, ահաբեկչական արարքների նպատակների և արդյունքների, Թուրքիայի վերածնունդը, որը փոխեց հայկական հարցի ընթացքը, դրանց դիմագրավման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները

-Վերլուծի և քննարկի Թուրքիայի արտաքին հարաբերություններն ու միջազգային դիրքը, պանթուրքիզմը՝ Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ, գործընթացները

Բովանդակություն

1. Առաջին գնդակը և հրահրված շարժումը (1ժամ)
2. Աշխարհը պիտի իմանար, որ հայը կարող է զոհվել հանուն արդարության(1ժամ)
3. Ինչպես մեկնաբանվեցին հայկական ահաբեկչական արարքները (1ժամ)
4. Թուրքիայի վերծնունդըձոխեց հայկական հարցի ընթացքը(1Ժամ)
5. Ժողովրդավարկան հանրապետություն, թե միապետություն(1ժամ)
6. Թուրքիայի արտաքին հարաբերություններն ամրապնդել են նրա միջազգային դիրքը(1ժամ)

7. Պանթուրքիզմը իշխում թ Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ (1ժամ):

Թեմա 7. Հայրենիք-սփյուռք ազգային շարժումը՝ հայկական հարցի մի նոր փուլ: Ղարաբաղի հիմնահարցը մեկնարկետն է հայկական հարցի այս նոր փուլում:

Նպատակ

Զարգացնել՝ Սփյուռքի արձագանքը Ղարաբաղյան շարժման Թուրքիայի կեցվածքը Հայաստանի նկատմամբ Արցախի զինված պաշտպանության, ԵԱՀԽ-ի խաղաղարար առաքելության, նորանկախ հայաստրանի դիրքորոշման վերաբերյալ գործընթացները հետազոտելու հմտությունները:

Խնդիրներ

Ծանոթացել համազգային շարժման, Ղարաբաղյան հինահարցը գործընթացների հետ:

Վերջնարդյուն

-ներկայացնի Սփյուռքի արձագանքը Ղարաբաղի պահանջատիրության հիմնախնդրին

-քննարկի ՀՀՇ-ի գործունեության, նախագահի հրաժարականի և հետագա քաղաքական

զարգացումները՝ արտահայտի իր կարծիքը:

-մեկնաբանի Ադրբեջանի հակահայ քաղաքականությունը, ինքնապաշտպանությունը, դիմում միջազգային կազմակերպություններին, ԵԱՀԽ-ի միջամտությունը, ռուսական քաղաքականությունը, Թուրքիայի դիրքորոշումը, միջազգային հակադարձը, Ադրբեջանի նավթը՝ որպես որոշիչ դեր, գործոնները և արտահայտի սեփական մոտեցումը:

Բովանդակություն՝

1.Սփյուռքը՝ թիկունք ու զորակից: (1ժամ)

2. Հայոց համազգային շարժումը՝ մի նոր կուսակցություն(1ժամ)

3. Նախագահի հրաժարականին հանգեցնող ազդակներ (1ժամ)

4. Ադրնեջանի հակահայ քաղաքականությունը, ինքնապաշտպանություն (1ժամ)

5. Ռուսական և թուրքական գործոնը Ղարաբաղում(1ժամ)

Թեմա 8. Հայկական հարցի հեռանկարները (2ժամ)

Նպատակ՝

-պատկերացում կազմի նորանկախ Հայաստանի հանրապետության հինմահարցերին:

-Զարգացնել հայոց ազգային պահանջատիրության գործընթացները հետազոտելու հմտությունները:

Խնդիր

Ծանոթացնել Հայաստանի հանրապետության հիմնահարցերին:

Վերջնարդյունք

-փաստարկի և բացատրի `նորանկախ Հայաստանի հիմնահարցերը՝ ժողովրդավարության կայացման գործընթացում տալ գնահատական:

-վերլուծի և քննարկի Ղարաբաղյան հարցի բարենպաստ լուծումը, որն իրականանալու է Հայաստան-Արցախ-Սփյուռք միացյալ ջանքերով և միջազգային հարթակներում տեղի ունեցող գործընթացներով, ինչպես նաև ՀՀ-ն կառավարության կոմպլեմենտար քաղաքականությամբ:

Բովանդակություն՝

1. Նորանկախ հայաստանի հանրապետության հիմնահարցերը(1ժամ)
2. Արցախյան հարցի բարենպաստ լուծում, որն իրականանալու է Հայաստան-Արցախ-Սփյուռք միացյալ ջանքերով(1ժամ)

Հաշվետու դաս (1ժամ)

Հայկական հարցի պատմություն, վիկտորինա, որի միջոցով ցուցադրեն ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները(1ժամ)

Խմբակի անդամները կկարողանան

Ա) ժողովրդավարական արժեքների հիման վրա ձևավորել և զարգացնել պետության կայացման գործում հմտություններ և կարողություններ

Բ) Ներկայացնի հայկական հարցի ծագման և լուծման ճանապարհին կատարված առաջին քայլերի մասին երևույթները և իրադարձությունները՝ տալ դրանց վերաբերյալ բացատրություններ

Գ)նկարագրի և հիմանավորի հայկական հարցի էությունը է մեծ տերությունների քաղաքականությունը, մամուլի գործոնը որպես ազդակ այդ իրադարձությունների լուսաբանման

-Բնութագրի Բեռլինի վեհաժողովի արդյունքները՝ կարծիք արտահայտելով այդ փաստերի վերաբերյալ

-վերլուծի հայ ավանդական քաղաքական կուսակցությունների նպատակները, զարգացնելով գիտելիքները՝ կատարել եզրահանգումներ

-արժևորել հայ ժողովրդի պայքարը Անդրկովկասում ցարական կառավարության դեմ, գիտակցելով ինքնուրույնության հասնելու ուղին

Դ) Մեկնաբանի երիտթուրքերի գործունեության ծրագրերը, վերլուծի հայոց ցեղասպանության ընթացքը, գիտակցի հայ ժողովրդի պայքարի մեթոդներ և ձևերը

-գնահատի ցեղասպանության պատասխանատուների դատավարությունը ու դատաստանը ունենա իր կանխակալ կարծիքը, կատարի հետևություն

-փաստարկել և բացատրել Ռուսաստանյան հեղափոխությունների անդրադարձը Անդրկովկասում, գիտակցի պատմական իրադարձությունների գնահատման ուղիները

Ե)Ներկայացնել հայկական հարցը՝ պետական քաղաքականության և միջազգային հարաբերություններում, գնահատել ձեռբերումները և բացթողումները

-վերլուծել Հայաստանի խորհրդայնացման գործընթացը պատմական դրվագներով, կանխատեսումներ անի դրանց արդյունքների և հետևանքների մասին

-գնահատել հետստալինյան ժամանակաշրջանում ազգային գիտակցության բարձրացման, խաղաղ պայքարի ընթացքում հայ ժողովրդի ձեռքբերումները

Զ)Մեկնաբանի Թուրքիայի վերածնունդը և հայկական հարցի ընթացքը գիտակցի դրանց դեմ ձեռնարկված միջոցառումները

-վերլուծել Թուրքիայի արտաքին հարաբերությունները զարգացման միտումները և միջազգային դիրքը՝ եզրահանգումներ անի դրանց վերաբերյալ

Է) ներկայացնել Սփյուռքի արձագանքը Ղարաբաղի պահանջատիրության հիմնախնդրին, գիտակցել այդ հարցի լուծման ուղիները:

-մեկնաբանի և քննարկի Ադրբեջանի հակահայկական քաղաքականությունը, միջազգային կազմակերպությունների դիրքորոշումները՝ կատարելով եզրահանգումներ, օրինաչափ լուծումների վերաբերյալ

Ը) բացատրի Ղարաբաղյան հարցի էությունը, գիտակցելով հարցի լուծման ուղիները՝ համայն հայության ջանքերը, Լ.Ղ.Հ. ժողովրդի դիրքորոշումը և միջազգային հարթակներում տեղի ունեցող քննարկումները: